

Պիոներներին յեվ աշակերտներին

Ստալինյան Սահմանադրութեան դրոշի տակ, մեր հայրենիքը թեվա-
կոխեց նոր՝ 1937 թվականը:

Դուք, սոցիալիզմի յերկրի յերջանիկ զավակներդ, շրջա-
պատված բուլշևիկյան կուսակցութեան և լենինյան կոմյերիտմիութեան
ստալինյան հոգատարութեամբ, առույգ, բերկրալից և ուրախ կանց-
կացնեք ձմեռվա արձակուրդը: Ձեր նոր տարվա տոնածառերը, Փիզ-
կուլտուրային տոնները, ինքնազորժողովութեան յերեկույթները, սպոր-
տային մրցութիւնները և առողջ հանգստի ու ժամանցի մյուս տեսակ-
ներն արտացոլում են խոր՝ բոլորային մեծ Միութեան հաղթանակած ժո-
ղովուրդների բերկրանքը և ուրախութիւնը:

Հանգստացե՛ք լավ, ուրախ, հետաքրքիր:

Նոր ուժով ու բերկրանքով աշխատանքի լծվեցե՛ք, բարձրացրե՛ք
ուսման վորակը, ամրացրե՛ք դիտակից կարգապահութիւնն ու կարգը
դպրոցում:

Ամրապնդեցե՛ք ժողովուրդների ստալինյան բարեկամութիւնը, եւ ա-
վելի բարձրացրե՛ք սրտխտարական մարտական ինտերնացիոնալիզմի
դրոշը: Գերազանց ուսմամբ և որինակելի կարգապահութեամբ պատաս-
խանեցե՛ք մեծ Ստալինի հայրական սիրուն և հոգատարութեանը:

Պատրաստ յեղեք պայքարելու հանուն լենինի-Ստալինի մեծ դոր-
ծին: